ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

1977 թ. հոկտեմբերի 25—27-ը տեղի ունեցավ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը» թեմայով գիտական կոնֆերանս,* որը կազմակերպել էին ՍՍՀՄ և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիաները, ՍՍՀՄ ԳԱ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմությունը» կոմպլեքսային թեմայի գիտական խորհուրդը և նրա հայկական սեկցիան, սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների բազմակողմանի գիտական համագործակցության «Մեծ Հոկտեմբերի պատմությունը և հետագա սոցիալիստական հեղափոխությունները» պրոբլեմային հանձնաժողովը։

ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և հանրապետության Մինիստրների խորհրդի անունից կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը: Նա մասնավորապես նշեց սովետական ժողովուրդների միասնությունը, նրանց բարեկամությունն ու եղբայրական համագործակցությունը, և որ ցանկացած սովետական հանրապետություն կարող է ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության կենսական ուժի փայլուն հաստատումը ծառայել մեր պետության 60-ամյա ճանապարհին։ Հավատարիմ լինելով մեծ Լենինի պատգամներին, վերջում նշեց Կ. Դալլաքյանը, կոմունիստական կուսակցությունը սովետական պետության զարգացումն անշեղորեն տանում է բոլոր եղբայր ժողովուրդների ինտերնացիոնալ միասնության է՛լ ավելի ամրապնդման ուղիով, ժողովուրդներ, որոնք միասնաբար առաջ են ընթանում դեպի կոմունիզմ։

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Ի. Մինցը: Նա ասաց, որ մեծ Հոկտեմբերը համաշխարհային հեղափոխության սկիզբն է և բաղկացուցիչ մասը։ Այնուհետև զեկուցողը կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ սոցիալիզմը և ազգային հարցի լուծումն անբաժանելի են, որ միայն սովետական իշխանության շնորհիվ պայմաններ ստեղծվեցին ազգային ճնշման ու ազգային անհավասարության իսպառ վերացման, նախկինում ճնշված ժողովուրդների բարգավաճման համար։

Ակադեմիկոս Յու. Բրոմլեյը զեկուցեց «Ազգային պրոցեսների հետազոտումը ՍՍՀՄ-ում» թեմայով։ Նա նշեց, որ ՍՍՀՄ փորձը աշխարհի ժողովուրդներին օրինակ է տալիս հասարակության զարգացման ամենաբարդ պրոբլեմներից մեկը՝ ազգային հարցը լուծելու համար։ «Մեծ Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրումը» զեկուցման մեջ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Աղայանն ասաց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը ուղի հարթեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար։ Հայ ժողովուրդը սովետական իշխանության հաստատումը հսկայական ոգևորությամբ ընդունեց։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Առաքելյանը խոսեց ՍՍՀՄ ժողովուրդների տնտեսական համագործակցության մասին։

Ակադեմիկոս Շ. Նացվլիշվիլու (ՄԺՀ), պրոֆեսորներ Մ. Կրոպիլոկի (ՉՍՍՀ), Վ. Բոժինովի (ԲԺՀ), Մ. Նեդելյայի (ՌՍՀ) և պատմական գիտությունների դոկտոր Բ. Սիգդեկի (ԼԺՀ) զեկուցումները նվիրված էին եղբայրական սոցիալիստական երկրներում ազգային հարցի լուծման գործում ՍՄԿԿ փորձի օգտագործման հսկայական նշանակությանը, իսկ պրոֆ. Վ. Շմիդտը (ԳԴՀ) անդրադարձավ սոցիալիստական գերմանական ազգի կազմավորմանը։

Չեխոսլովակիայում ազգային հարցի վրա Հոկտեմբերի անմիջական ազդեցության քննությանն էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Տ. Վոյաեխի (ՉՍՍՀ) զեկուցումը։

Մոլդավական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Լազարևի և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Դանիլենկոյի (Քիշնև) զեկուցումը նվիրված էր մեծ Հոկտեմբերի ազդեցության ներքո Մոլդավիայում ազգային հարաբերությունների զարգացման լուսաբանմանը, իսկ պատմական գիտությունների դոկտոր Բաղշայուբներ-Պետերսի (ԳԴՀ) հաղորդումը՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությու-

նը և ազգայինի ու ինտերնացիոնալի դիալեկտիկան ԳԴՀ սոցիալիստական կուլտուրայում» թեմային։

«Ազգային հարցը սովետական զինված ուժերի կառուցման գործում» թեման արծարծեց պատմական գիտությունների դոկտոր Յու. Կսարբլյովը (Մոսկվա)։ Մերձբալթիկայում ազգային հարցի լուծման գործում մեծ Հոկտեմբերի պատմական նշանակությունը լուսաբանող հարուստ գրականության քննությանն էր նվիրված Լիտվական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Իիրոնի և պատմական գիտությունների դոկտորներ Ի. Վայտկյավիչուսի (Վիլնյուս) ու Կ. Սիյլիվասկի (Տալլին) զեկուցումը։

«Մեծ Հոկտեմբերը և ազգային հարցը Հունդարիայում» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Լ. Կյովազոն (ՀԺՀ)։ Պատմական գիտությունների թեկնածու Կ. Պոլեշուասկու (ԲԺՀ) հաղորդումը նվիրված էր բուլղարական պատմագրության մեջ ազգային հարցի լուսաբանմանը։

«Մեծ Հոկտեմբերը և ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման միջազգային նշանակությունը» թեմայով ելույթ ունեցավ պատմական գիտությունների դոկտոր Ա. Զուքարյանը (Մոսկվա)։

Պատմական գիտությունների դոկտորներ Լ. Նագորնայայի (Կիև) և Խ. Ինոյատովի զեկուցումները նվիրված էին Ուկրաինայում և Միջին Ասիայի հանրապետություններում ՍՄԿԿ ազգային քաղաքականության բուրժուական կեղծարարների քննադատությանը։

Գիտական կոնֆերանսի վերջում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին պատմական գիտությունների դոկտորներ Յա. Կոպանսկիե (Քիշնև), Պ. Սելիվանովը (Մինսկ), Ա. Սաեուսևիչը (Մոսկվա)։

Վերջում կոնֆերանսի արդյունքներն ամփոփեց ակադեմիկոս Ի. Մինցը։

Կոնֆերանսին մասնակցում էր ՀԿԿ Կենտկոմի գիտության և բարձրագույն ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Խաչիկյանը։